



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՕՂԱՆԱԽ ԱՐԿԱԾԻ ՉՈՂԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՑԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ ԿՐ ՅԱՅՏՆԷ
 ՆԱԽԱԳԱՅ ՌՈՊԵՐԹ ԶՈՉԱՐԵԱՆԻ**

Հայկական «Արմալիա» ընկերության օղանալին արկածին առիթով, որ տեղի ունեցած էր Չորեքշաբթի, 3 Մայիսի կանուխ առաւօտուն, Սոչիի մօտ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան հաղորդակցութեան մէջ մտաւ Լոս Անճելըսի մէջ Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Գագիկ Կիրակոսեանի հետ ու ցաւակցութիւն յայտնեց ինկած զոհերուն համար:

Առաջնորդ Սրբազանը, յանուն մեր Թեմին, նաեւ հետեւեալ ցաւակցական նամակը յղեց Հայաստանի նախագահ Ռոպերթ Զոչարեանի.-

*Նորին Վսեմութիւն
 Ռոպերթ Զոչարեան
 Նախագահ Հայաստանի Հանրապետութեան
 Երեւան*

Յարգելի Պարոն Նախագահ,

Խոր ցաւով իմացանք «Արմալիա» ընկերութեան օղանալի արկածին լուրը, որ համայն հայութեան հետ սուգի մատնեց նաեւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու մեր շրջանի հայութիւնը:

Յանուն Միացեալ Նահանգներու Արեւմտեան մեր Թեմիս Հոգեւորականաց Դատուն, Կրօնական Ժողովին, Ազգային Վարչութեան, Ժողովականութեան ու մեր հաւատացեալ ժողովուրդին, նաեւ անձնապէս, այսու ցաւակցութիւն ու կը յայտնենք Ձեզի ու կը կարեկցինք ողբերգական արկածին զոհերուն ընտանիքներուն: Կ'ուզենք նաեւ յայտնել Ձեզի, որ մեր տնօրինումով, յառաջիկայ Կիրակի, 7 Մայիս 2006ին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան յատուկ արարողութիւն պիտի կատարենք, ինդրելով Երկնաւոր Հօրմէն, որ անոնց հոգիները ընդունի Իր երկնային արքայութեան մէջ, իսկ անոնց ընտանիքներուն ու մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն ընծայէ Ս. Հոգւոյ մխիթարութիւնը:

Միոյ ջերմ ողջունիւ,

*Աղօթարար՝
 Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ
 Ա. Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի*

Յայտնենք, որ Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, Ուրբաթ, 5 Մայիսի կէսօրին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան յատուկ արարողութիւն, արկածի զոհերուն հոգիներուն համար: Իբրեւ Առաջնորդ Սրբազանին ներկայացուցիչը՝ Գերայ. Ս. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան պատգամ մը ուղղեց ներկաներուն եւ

կոչ ուղղեց, որ մեր ժողովուրդի զաւակները, ի յարգանս զոհերուն, արկածին ժամը ի մտի ունենալով՝ յետմիջօրեի ժամը 2:15ին պահ մը դադրեցնեն իրենց աշխատանքները ու լռութեան պահ մը բոլորեն զոհերուն յիշատակը յարգելու համար: Իսկ յետմիջօրեին, Թեմիս Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան ներկայացուցիչները՝ Արժ. Տ. Ռազմիկ Քինյ. Խաչատուրեան եւ Տիար Բեգլար Փիլաւճեան այցելեցին Յայաստանի հիւատոսարանը եւ յանուն մեր Թեմի ժողովականութեան, ցաւակացութիւն յայտնեցին գլխաւոր հիւպատոս Գագիկ Կիրակոսեանի, հիւպատոսարանի անձնակազմին, ու ցաւակցական արձանագրութիւն թողուցին այս առիթով բացուած տոմարին մէջ:

FOR THE LIVES LOST IN THE “ARMAVIA” PLANE CRASH

THE PRELATE EXPRESSES CONDOLENCES TO PRESIDENT ROBERT KOCHARIAN

His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, with heartfelt sympathies, expressed condolences to Mr. Gagik Giragossian, Consul General of Armenia, for the lives lost in the tragic plane crash of “Armavia Airlines” that occurred on Wednesday, May 3, on its way to the city of Sochi, Russia.

On behalf of the Prelacy Religious and Executive Councils, the Prelate also sent a letter of condolence to President Robert Kocharian, and announced that special requiem services would take place in all Prelacy churches on Sunday, May 7.

At noon of Friday, May 5, special requiem services were conducted at St. Mary’s Church in Glendale for the souls of the victims of the plane crash. Representing the Prelate, Very Rev. Fr. Muron Aznikian delivered a message to the faithful and urged them to have a moment of silence at 2:15 p.m., the time of the crash, to remember the victims. Following the service, Rev. Razmig Khatchadourian and Peklar Pilavjian, representing the Religious and Executive Councils of our Prelacy, respectively, visited the Armenian Consulate and personally expressed condolences on behalf of the Prelacy to the Consul General and the Consulate staff.